ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1963 Общественные науки

Ս. Բուռնազյան

ՀԱՅ ԱՍՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Կիլիկիայի հայկական պետությունը իր կազմավորման օրից մինչև կործանումը (1080—1375) մշտապես գտնվում էր միջազգային բարդ իրադրության մեջ, որը հետևանք էր այն բանի, որ Կիլիկիան շրջապատված էր բազմաթիվ թշնամաբար տրամադրված պետություններով, որոնք, սկսած XII դարից, հաճախ ներխուժում էին նրա տերիտորիան և սպառնում նրա գոյությանը։ Հատկապես ճակատագրական էին Եգիպտոսի մամլուկների հաճախակի և պարբերական ներխուժումները, որոնք XIII դ. երկրորդ կեսից շարունակվեցին մինչև XIV դարի վերջին քառորդը և վերջնականապես կործանեցին Կիլիկիայի թագավորությունը։ Այդպիսի միջազգային դրության մեջ, Կիլիկիայի պետության մշտական ապահովության խիստ անհրաժեշտ գործոններից մեկը կանոնավոր, մշտական և ուժեղ բանակի առկայությունն էր, նրա ռազմական տեխնիկայի ու մարտունակության բարձրացումը, որի թվական կազմը մեծ չափով ավելանում էր պատերազմի ժամանակ։ Մշտական բանակ են պահել նաև Կիլիկիայի իշխաններն ու հատկապես սահմանամերձ շրջանների բերդատերերն ու սահմանապահ իշխանները։

Ինչպես հայտնի է, Բյուզանդիան 11-րդ դ. հայ թագավորներին ու ֆեոդալներին տեղափոխում էր Կապադովկիա, Սիրիա և Կիլիկիա՝ իրենց ռազմական ուժերով հանդերձ, հանձնելով նրանց վերոհիշյալ բյուզանդական պրովինցիաների սահմանամերձ բերդերի և ամրոցների պաշտպանությունը, նվիրելով նրանց ընդարձակ կալվածներ, դնելով նրանց վասալական կախման մեջ[1]։

Հետագայում, երբ Կապադովկիան և Սիրիան նվաճվեցին թուրք սելջուկների կողմից, այդ վայրերի հայ իշխաններն իրենց զորքերով փոխադրվեցին Կիլիկիա, որտեղ նույնպես ստանձնեցին սահմանային բերդերի պաշտպանությունը[2]։ *11—12-րդ դարերում Կիլիկիայում Ռուբինյան իշխանության և ապա թագավորության ստեղծումից հետո վերոհիշյալ հայ իշխանների զորքերը մտան թագավորական բանակը և կազմեցին «հայոց հեծյալ»-ը, որը պահպանելով բուն Հայաստանի հայոց հեծյալի տրադիցիաները, նոր իրադրության մեջ կրեց որոշ փոփոխություններ, որոնցից հատկապես նշանակալից էր. արևմտաեվրոպական ազդեցության տակ հանդես եկած հայ ասպետությունը, որը, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայում և խաչակրաց պետություններ-*

---

[1] *Տե՛ս «Ժամանակագրութիւն Միքայելի Ասորւոյ պատրիարքին», Յերուսաղեմ, 1871, էջ 198, հմմտ.* Chronique Michel le Syrien. Paris, 1905, p. 133. *տես նաև «Լումայ», 1899, էջ 69։ Տե՛ս նաև* A. H. Sayce, Les Hititles, Histoire d'un empire oublié. Paris, 1891, p. 250.

[2] *«Մատթէոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 151, 213։*